

ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏ



անդրխտութիւն, պանդրխտութիւն,

Ա՛հ, սըրամաշուք պանդրխտութիւն.

Ո՛վ այնպէս լաւ ըզքեզ, ո՛հ, ո՛վ կուճանչնայ

Քան զորդին Հայկայ:

Ո՛վ տառապանքդ ու քո ցաւեր

Այնպէս երկար քաշել քաշեր՝

Որպէս խեղճ Հայն՝ յոր կութափես դու զամէն

Վրէժ քո եւ քէն:

Որո՞նք աչքէն այնչափ արցունք,

Որո՞նք սըրտէն այնչափ կայծունք,

Որո՞նք բերնէն այնչափ հառաչք արիւնթոր

Խրլես ամէն օր:

Աչքն որ բանայ յաշխարհ՝ առաջ

Քեզ կուտեսնայ՝ քեզ ձախ եւ յաջ.

Դո՞ւ ես գայեակ Հայուն յաւուր ծընընդեան,

Դո՞ւ զնա պատես իտապան:

Աչք լալագին՝ գըլուխ խոնարհ

Թափառելով յամէն աշխարհ,

Հայն հարցանէ, «Դո՞ւ ես արդեօք իմ երկիր,

«Զհարցս ունիս մոխիր» . . . :

Կամ երբ տեսնէ լերանց գօտիս՝
 Հարցանէ, «Դ՞ո՞ւ ես մեր Մասիս»
 Եւ կամ մաքուր գետոց տեսեալ սաՀս արագս՝
 «Դ՞ո՞ւ ես իմ Արաքս»:

Բայց լեռն Հայի սեւ սեւ յօնօք
 Եւ չլլիւսէ զՀայուն ողորք,
 Եւ չիմարել գետն այն ալեօքըն թաթաւ
 Հայուն ծարաւ . . . :

Ի՞նչ սըրտաբեկ գոյ առաւել,
 Բոլոր աշխարհ շուրջ թափառել՝
 Եւ ոչ լրսել եւ ոչ բզգեղ մի կամ տուն
 Հարցդ յանուշ անուն:

Ո՛հ, ի՞նչ ցաւ, ի՞նչ քան զայն տրխուր
 Քան չըգիտնալ թէ թաղուիս ո՞ւր,
 Զըգիտնալ թէ կեանք տըւողացդ արդեօք քով
 Տի նընջես մահով:

Ի՞նչ քան զայն դառն որ չընդունիս
 Քեզ սեփական եւ ոչ մի թիղ,
 Եւ չըկարես ասել մահուդ յանկողին,
 «Զեզ կըթողում, որգեակք, ըզհարցս իմ գետին» . . . :

Պանդըխտութիւն, պանդըխտութիւն,
 Ո՛հ սըրտմաշո՞ւք պանդըխտութիւն,
 Ո՞վ այնպէս լաւ ըզքեզ, ո՛հ, ո՞վ կուճանհնայ
 Քան զորդին Հայկայ: